# <<ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ>> ՊՈԱԿ-Ի ՀԱՄԱՐ <<ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ>>ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N <<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/03>>

ք. Երևան <<20>> <<մարտի>> 2017թ.

<<Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա>> ՊՈԱԿ-ն, ի դեմս ռեկտոր Ա. Իսաբեկյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<Սմարթլայն>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Ղարիբյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված <<Գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր>> /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

## 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

3.1.8 Ընել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիությունները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 565390 (հինգ հարյուր վաթսունհինգ հազար երեք հարյուր իննսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.8 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.9 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ | «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ |
| ք. Երևան, Իսահակյան 36 | ք. Երևան, Վարդանանց 110 |
| «Անելիք բանկ» Տիգրան Մեծ մ/ճ | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| ՀՀ 11815000774800 | Հ/Հ՝ 163007031509 |
| ՀՎՀ 01505555 | ՀՎՀՀ 01548908 |
| Ռեկտոր՝ | Տնօրեն |
| _____ Է. Իսաբեկյան | _____ Տ. Ղարիբյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ |

Հավելված N 1
<< 20>> << մարտի>> 2017թ. կնքված
<<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/03>> *ծածկագրով գնման պայմանագրի*

# ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Չափաբաժին | Ապրանքի անվանում | Տեխնիկական բնութագիր |
|---|---|---|
| 1 | Գնդիկավոր գրիչ | գրիչ գնդիկավոր, ռետինե բռնակով, թափանցիկ կորպուսով, Cello Finegrip, կամ համարժեքը, կապույտ |
| 2 | գելային գրիչ | գրիչ սև , 0.5 մմ ծայրով, /գել/ AIHAO կամ համարժեքը |
| 3 | մատիտ | մատիտ , գրաֆիտե միջուկով, սրած, ռետինե ջնջոցով, No 2 HB |
| 5 | Շտրիխներ | ուղղիչ վրձնիկով, 20 մլ |
| 6 | գծանշիչ (մարկեր) | տարբեր գույնի, նախատեսված ընգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրով |
| 7 | Մարկեր գրատախտակի | մարկեր մագնիսական գրատախտակների համար, սև, կապույտ |
| 8 | Քանոն | ուղիղ քանոն, գծաբաժանումներով, 30 սմ երկարությամբ, պլաստմասե, թափանցիկ, բռնակով |
| 9 | Ռետին | ռետինե ջնջոց, նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար, 40մմ |
| 10 | թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ | թուղթ A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանկով ստված, 80 գ/մ2 / 210X297/ մմ, դաս Ա, 500 էջ |
| 11 | թղթապանակ, պոլիմերային թաղանթ,Ֆայլ | թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու հնարավորություն, 70 միկրոն |
| 14 | թուղթ նշումների, տրցակներով , կպչուն | թերթիկներ նշումների համար, գունավոր, կպչուն, տրցակներով 76 x 76մմ, 100 թերթ |
| 18 | սոսինձ, էմուլսիա | սոսինձ ՊՎԱ (էմուլսիա) 120 գր /էմուլսիա գրենական/ |
| 19 | Ամրակ մետաղյա փոքր | փոքր, գրասենյակային ամրակներ /սկրեպ/ 33մմ երկարությամբ, թղթի դարսը լիարժեք ամրությամբ միասնական պահելու կարողությամբ: |
| 20 | թղթապանակ, կոշտ կազմով | թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, A4/ 210x297/ մմ ձևաչափի թղթերի համար, ներսի մակերեսը լամինապատված, հաստությունը 8 սմ, սև, կապույտ, կանաչ |
| 21 | թղթապանակ, կոշտ կազմով | թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, A4/ 210x297/ մմ ձևաչափի թղթերի համար, ներսի մակերեսը լամինապատված, հաստությունը 4 սմ սև, կապույտ, կանաչ |

| | | |
|---|---|---|
| 22 | Թղթապանակ կոճզամով | թղթապանակ կոճակով, A4 ֆորմատի, թափանցիկ, կապույտ, կանաչ |
| 23 | արագակարներ | արագակար, պլաստիկ, A4 ֆորմատի, տարբեր գույների, հաստ |
| 24 | կարիչի մետաղալարե կապեր, փոքր | գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 10մմ/6մմ |
| 25 | կարիչի մետաղալարե կապեր, միջին | գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 24մմ/6մմ, 26մմ/6մմ |
| 26 | ծրար, մեծ, A4 ֆորմատի համար | ծրար՝ A4 /210 x297/ մմ ձևաչափի , 90 % սպիտակության, 1 մ2 մակերեսը՝ 100գ զանգվածով N1 օֆսեթայինթղթից ըստ ԳՕՍՏ 9094-89, ինքնասոսնձվող |
| 27 | ծրար, A5ֆորմատի համար | ծրար՝ A5 ինքնասոսնձվող, սպիտակ |
| 28 | գրասենյակային գիրք | գրասենյակային գիրք, 70 էջ, տողանի, օֆսեթ թղթից, սպիտակ էջերով |
| 30 | ապակարիչներ | գրասենյակային ապակարիչ N10, N24, N26, և N26.6 ասեղներով կարված թղթերը քանդելու համար: Նախատեսված է կարիչով կարված թղթերը քանդելու համար |
| 32 | հաշվիչ սարք | հաշվասարք/ հաշվիչ սեղանի/, 12 նիշանի, միջին չափի, գործողությունները ցուցադրումով վահանակի վրա, սնուցման 2 աղբյուր, բարձր որակի |
| 33 | մկրատ գրասենյակային | մկրատ, 13 սմ, չժանգոտվող պողպատից Maped կամ համարժեքը |
| 34 | օրատետր A5 2017 | օրացույցեր 2017թ-ի համար, A5 ֆորմատի, փափուկ կազմ |
| 36 | սրիչ | սրիչ գրաֆիտե մատիտների համար, երկաթյա Maped կամ համարժեքը |
| 37 | Ֆլեշ 4 GB | ֆլեշ քարտ, 4 GB, USB |
| 38 | Կոճզամ պլաստմասե գլխիկներով | գունավոր մեխիկ, պլաստմասսայե գլխիկով |
| 39 | ֆլիպչարտի թուղթ | 585*810մմ, 25 թուղթ, սպիտակ |
| 40 | ֆլիպչարտի տակդիր | ֆլիպչարտի տակդիր 70*100սմ |
| 41 | թղթերի սեղմակ | թղթերի սեղմակ 32 մմ, տուփում 12 հատ |
| 42 | թղթերի սեղմակ | թղթերի սեղմակ 25մմ, տուփում 12 հատ |
| 43 | կարիչներ, 30-50 թերթի համար | գրասենյակային կարիչ, 30-50 թերթ, մետաղալարե կապերով ամրացնելու համար |
| 44 | կավիճներ | կավիճ, սպիտակ, տուփով |

**ԳՆՈՐԴ**

«Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ
ք. Երևան, Իսահակյան 36
«Անելիք բանկ» Տիգրան Մեծ մ/ճ
ՀՀ 11815000774800
ՀՎՀՀ 01505555
Ռեկտոր՝
Ա. Իսաբեկյան
(ստորագրություն)

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 163007031509
ՀՎՀՀ 01548908
Տնօրեն՝
Տ. Դպրիրյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
<<20>> <<մարտի>> 2017թ. կնքված
<<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/03>> *ծածկագրով գնման պայմանագրի*

## ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| ՀՀ | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել 2017 թ. մինչև մարտի 31-ը | | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը | I եռամսյակ | | II եռամսյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | | |
| | | | | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | Գնդիկավոր գրիչ | հատ | 65 | 50 | 3250 | | | | | | | 50 | 3250 |
| 2 | գելային գրիչ | հատ | 80 | 40 | 3200 | | | | | | | 40 | 3200 |
| 3 | մատիտ | հատ | 28 | 50 | 1400 | | | | | | | 50 | 1400 |
| 5 | Շտրիխներ | հատ | 165 | 20 | 3300 | | | | | | | 20 | 3300 |
| 6 | գծանշիչ (մարկեր) | հատ | 150 | 20 | 3000 | | | | | | | 20 | 3000 |
| 7 | Մարկեր գրատախտակի | հատ | 170 | 20 | 3400 | | | | | | | 20 | 3400 |
| 8 | Քանոն | հատ | 190 | 5 | 950 | | | | | | | 5 | 950 |
| 9 | Ռետին | հատ | 60 | 10 | 600 | | | | | | | 10 | 600 |
| 10 | թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ | տուփ | 1550 | 200 | 310000 | | | | | | | 200 | 310000 |
| 11 | թղթապանակ, պոլիմերային թաղանթ,ֆայլ | հատ | 15 | 2000 | 30000 | | | | | | | 2000 | 30000 |
| 14 | թուղթ նշումների, տրցակներով , կպչուն | տուփ | 110 | 40 | 4400 | | | | | | | 40 | 4400 |
| 18 | տոսինձ, էմուլսիա | հատ | 180 | 10 | 1800 | | | | | | | 10 | 1800 |
| 19 | Ամրակ մետաղյա փոքր | տուփ/100 հատ | 80 | 10 | 800 | | | | | | | 10 | 800 |
| 20 | թղթապանակ, կոշտ կազմով | հատ | 570 | 40 | 22800 | | | | | | | 40 | 22800 |
| 21 | թղթապանակ, կոշտ կազմով | հատ | 570 | 40 | 22800 | | | | | | | 40 | 22800 |
| 22 | Թղթապանակ կոճզամով | հատ | 90 | 40 | 3600 | | | | | | | 40 | 3600 |
| 23 | արագակարներ | հատ | 90 | 30 | 2700 | | | | | | | 30 | 2700 |
| 24 | կարիչի մետաղալարե կապեր, փոքր | տուփ | 50 | 10 | 500 | | | | | | | 10 | 500 |
| 25 | կարիչի մետաղալարե կապեր, միջին | տուփ | 70 | 10 | 700 | | | | | | | 10 | 700 |
| 26 | ծրար, մեծ, A4 ֆորմատի համար | հատ | 30 | 100 | 3000 | | | | | | | 100 | 3000 |
| 27 | ծրար, A5ֆորմատի համար | հատ | 20 | 100 | 2000 | | | | | | | 100 | 2000 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 28 | գրասենյակային գիրք | հատ | 420 | 5 | 2100 | | | | | | | 5 | 2100 |
| 30 | ապակարիչներ | հատ | 140 | 6 | 840 | | | | | | | 6 | 840 |
| 32 | հաշվիչ սարք | հատ | 1500 | 3 | 4500 | | | | | | | 3 | 4500 |
| 33 | մկրատ գրասենյակային | հատ | 300 | 10 | 3000 | | | | | | | 10 | 3000 |
| 34 | օրատետր A5 2017 | հատ | 1050 | 10 | 10500 | | | | | | | 10 | 10500 |
| 36 | սրիչ | հատ | 200 | 10 | 2000 | | | | | | | 10 | 2000 |
| 37 | Ֆլեշ 4 GB | հատ | 3200 | 10 | 32000 | | | | | | | 10 | 32000 |
| 38 | Կոճզամ պլաստմասե գլխիկներով | տուփ | 170 | 10 | 1700 | | | | | | | 10 | 1700 |
| 39 | ֆլիպչարտի թուղթ | հատ | 2000 | 3 | 6000 | | | | | | | 3 | 6000 |
| 40 | ֆլիպչարտի տակդիր | հատ | 34000 | 2 | 68000 | | | | | | | 2 | 68000 |
| 41 | թղթերի սեղմակ | տուփ | 290 | 5 | 1450 | | | | | | | 5 | 1450 |
| 42 | թղթերի սեղմակ | տուփ | 240 | 5 | 1200 | | | | | | | 5 | 1200 |
| 43 | կարիչներ, 30-50 թերթի համար | հատ | 1250 | 6 | 7500 | | | | | | | 6 | 7500 |
| 44 | կավիճներ | տուփ | 80 | 5 | 400 | | | | | | | 5 | 400 |
| Ընդամենը | | | | X | | | | X | | X | | X | **565390** |

**ԳՆՈՐԴ**

«Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ
ք. Երևան, Իսահակյան 36
«Անելիք բանկ» Տիգրան Մեծ մ/ճ
ՀՀ 11815000774800
ՀՎՀՀ 01505555
Ռեկտոր՝
Ա. Իսաբեկյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 163007031509
ՀՎՀՀ 01548908
Տնօրեն՝
Տ. Ղարիբյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
<<20>> <<մարտի>> 2017թ. կնքված
<<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/03>> *ծածկագրով գնման պայմանագրի*

## ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| N | Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ | | | | 565 390 | | | | | | | | | 565390 |

**ԳՆՈՐԴ**

«Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ
ք. Երևան, Իսահակյան 36
«Անելիք բանկ» Տիգրան Մեծ մ/ճ
ՀՀ 11815000774800
ՀՎՀ 01505555
Ռեկտոր՝
Ա. Իսաբեկյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 163007031509
ՀՎՀՀ 01548908
Տնօրեն՝
Տ. Ղարիբյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 4
<< >> << >> 20 թ. կնքված
N _____ *ծածկագրով գնման պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| _____ | _____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 4.1
<< >> << >> 20 թ. կնքված
N _____ *ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | Հարկային հաշիվ (ապրանքների մատակարարման) | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|---|
| 5 | Ապրիլ | 2017 թ. | | Ա | 5721501013 |
| [4] Մատակարարման ամսաթիվ | | | | | |
| 5 | Ապրիլ | 2017 թ. | Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «Հ») | հատուկ | Ճշգրտվող հաշվի |
| | | | | | Սերիա / Համար |
| | | | | | Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար | [7] | |
|---|---|---|---|---|
| | 20 Մարտ, 2017 թ. | <<ԼՀԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/03>> | [8] | |
| | | | [9] | |

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

**Ապրանքներ մատակարարող (առաքող) անձի**

| | |
|---|---|
| [11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 1 5 4 8 9 0 8 |
| [12] Անվանումը | «ՍՄԱՐԹԼԱՅՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| [13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 1 5 4 8 9 0 8 / 1 |
| [14] Բանկային տվյալները | <Հայէկոնոմբանկ> ԲԲԸ N 16300-7031509 |
| [15] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ Փ. 110 |
| [16] Վայրը, որտեղից ապրանքները մատակարարվում են | Արմենբերդի 5/6 |
| [17] Լրացուցիչ տվյալներ | |

**Ապրանքներ ձեռք բերող անձի**

| | |
|---|---|
| [18] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 1 5 0 5 5 5 5 |
| [19] Անվանումը | «ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) |
| [20] Բանկային տվյալները | «Անելիք բանկ» կենտրոն մ/ճ N 11815000774800 |
| [21] Գտնվելու վայրը (հասցեն) | ԿԵՆՏՐՈՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ Փ. 36 |
| [22] Լրացուցիչ տվյալներ | |
| [23] Ում միջոցով | Անուն, ազգանուն / Լիազորագիր: Համար / Ամսաթիվ |
| [24] Ապրանքների մատակարարման (առաքման) եղանակը | |
| [25] Մատակարարվող (առաքվող) ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ք. Երևան, Իսահակյան 36 |

[26] Մատակարարվող ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ապրանքի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումար | Ընդամենը | Այդ թվում՝ բնապ. վճար |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Գնդիկավոր գրիչ | հատ | 50 | 54.1667 | 2708.34 | 20 | 541.67 | 3250.01 | |
| 2 | Գելային գրիչ | հատ | 40 | 66.6667 | 2666.67 | 20 | 533.33 | 3200 | |
| 3 | մատիտ | հատ | 50 | 23.3334 | 1166.67 | 20 | 233.33 | 1400 | |
| 4 | Շտրիխներ | հատ | 20 | 137.5 | 2750 | 20 | 550 | 3300 | |
| 5 | Գծանշիչ (մարկեր) | հատ | 20 | 125 | 2500 | 20 | 500 | 3000 | |
| 6 | Մարկեր գրատախտակի | հատ | 20 | 141.6667 | 2833.33 | 20 | 566.67 | 3400 | |
| 7 | Քանոն | հատ | 5 | 158.3334 | 791.67 | 20 | 158.33 | 950 | |
| 8 | Ռետին | հատ | 10 | 50 | 500 | 20 | 100 | 600 | |
| 9 | թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ | տուփ | 200 | 1291.6667 | 258333.34 | 20 | 51666.67 | 310000.01 | |
| 10 | թղթապանակ, պոլիմերային թաղանթ,ֆայլ | հատ | 2000 | 12.5 | 25000 | 20 | 5000 | 30000 | |
| 11 | թուղթ նշումների, տրցակներով , կպչուն | տուփ | 40 | 91.6667 | 3666.67 | 20 | 733.33 | 4400 | |
| 12 | սոսինձ, էմուլսիա | հատ | 10 | 150 | 1500 | 20 | 300 | 1800 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13 | Ամրակ մետաղյա փոքր | տուփ/100 հատ | 10 | 66.6667 | 666.67 | 20 | 133.33 | 800 | |
| 14 | թղթապանակ, կոշտ կազմով | հատ | 40 | 475 | 19000 | 20 | 3800 | 22800 | |
| 15 | թղթապանակ, կոշտ կազմով | հատ | 40 | 475 | 19000 | 20 | 3800 | 22800 | |
| 16 | Թղթապանակ կոճգամով | հատ | 40 | 75 | 3000 | 20 | 600 | 3600 | |
| 17 | արագակարներ | հատ | 30 | 75 | 2250 | 20 | 450 | 2700 | |
| 18 | կարիչի մետաղալարե կապեր, փոքր | տուփ | 10 | 41.6667 | 416.67 | 20 | 83.33 | 500 | |
| 19 | կարիչի մետաղալարե կապեր, միջին | տուփ | 10 | 58.3334 | 583.33 | 20 | 116.67 | 700 | |
| 20 | ծրար, մեծ, A4 ֆորմատի համար | հատ | 100 | 25 | 2500 | 20 | 500 | 3000 | |
| 21 | ծրար, A5ֆորմատի համար | հատ | 100 | 16.6667 | 1666.67 | 20 | 333.33 | 2000 | |
| 22 | գրասենյակային գիրք | հատ | 5 | 350 | 1750 | 20 | 350 | 2100 | |
| 23 | ապակարիչներ | հատ | 6 | 116.6667 | 700 | 20 | 140 | 840 | |
| 24 | հաշվիչ սարք | հատ | 3 | 1250 | 3750 | 20 | 750 | 4500 | |
| 25 | մկրատ գրասենյակային | հատ | 10 | 250 | 2500 | 20 | 500 | 3000 | |
| 26 | օրատետր A5 2017 | հատ | 10 | 875 | 8750 | 20 | 1750 | 10500 | |
| 27 | սրիչ | հատ | 10 | 166.6667 | 1666.67 | 20 | 333.33 | 2000 | |
| 28 | Ֆլեշ 4 GB | հատ | 10 | 2666.6667 | 26666.67 | 20 | 5333.33 | 32000 | |
| 29 | Կոճգամ պլաստմասե գլխիկներով | տուփ | 10 | 141.6667 | 1416.67 | 20 | 283.33 | 1700 | |
| 30 | ֆլիպչարտի թուղթ | հատ | 3 | 1666.6667 | 5000 | 20 | 1000 | 6000 | |
| 31 | ֆլիպչարտի տակդիր | հատ | 2 | 28333.3334 | 56666.67 | 20 | 11333.33 | 68000 | |
| 32 | թղթերի սեղմակ | տուփ | 5 | 241.6667 | 1208.33 | 20 | 241.67 | 1450 | |
| 33 | թղթերի սեղմակ | տուփ | 5 | 200 | 1000 | 20 | 200 | 1200 | |
| 34 | կարիչներ, 30-50 թերթի համար | հատ | 6 | 1041.6667 | 6250 | 20 | 1250 | 7500 | |
| 35 | կավիճներ | տուփ | 5 | 66.6667 | 333.33 | 20 | 66.67 | 400 | |
| **Ընդամենը** | | | | | 471158.37 | X | 94231.65 | 565390 | |

**Դուրս գրող՝** **GHARIBYAN TIGRAN 1801840415**

անունը, ազգանունը

05/04/2017 10:26:16

**Ստացող**

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

Հավելված N 4
« 20 » 03 2017թ. կնքված
N <<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/03>> գնման պայմանագրի

Վաճառող
«Սմարթլայն» ՍՊԸ
հասցե ք. Երևան, Վարդանանց 110
հհ 16300-7031509
<Հայէկոնոմբանկ> ԲԲԸ
հվհհ 01548908

«Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ
հասցե ք. Երևան , Իսահակյան 36
հհ 1180510703320 0
«Անելիք բանկ» Կենտրոն մ/ճ
ՀՎՀՀ 01505555

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՀԱՆՁՆՄԱՆ -ԸՆԴՈՒՆՄԱՆ

« 05 » « 04 » 2017թ.

Պայմանագրի անվանումը՝ «Գրասենյակային նյութերի և գրենական պիտույքների» գնման պայմանագիր:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 20 .03.2017թ.
Պայմանագրի համարը՝ N <<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/03>>

Գնորդն, ի դեմս «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ն ի դեմս ռեկտոր Ա. Իսաբեկյանի և Վաճառողն՝ ի դեմս «Սմարթլայն» ՍՊԸ-ի տնօրեն Տ. Ղարիբյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ <____> <_____> 2017 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N ___ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Գնդիկավոր գրիչ | ռետինե բռնակով, թափանցիկ կորպուսով | 50 | 50 | II եռամսյակ | ապրիլ | 3250 | ըստ պայմանագրի |
| 2 | գելային գրիչ | գրիչ սև , 0.5 մմ ծայրով, /գել/ | 40 | 40 | II եռամսյակ | ապրիլ | 3200 | ըստ պայմանագրի |
| 3 | մատիտ | գրաֆիտե միջուկով | 50 | 50 | II եռամսյակ | ապրիլ | 1400 | ըստ պայմանագրի |
| 4 | Շտրիխներ | վրձնիկով, 20 մլ | 20 | 20 | II եռամսյակ | ապրիլ | 3300 | ըստ պայմանագրի |
| 5 | գծանշիչ (մարկեր) | տարբեր գույնի, տափակ ծայրով | 20 | 20 | II եռամսյակ | ապրիլ | 3000 | ըստ պայմանագրի |
| 6 | Մարկեր գրատախտակի | մագնիսական սև, կապույտ | 20 | 20 | II եռամսյակ | ապրիլ | 3400 | ըստ պայմանագրի |
| 7 | Քանոն | 30 սմ | 5 | 5 | II եռամսյակ | ապրիլ | 950 | ըստ պայմանագրի |
| 8 | Ռետին | 40մմ | 10 | 10 | II եռամսյակ | ապրիլ | 600 | ըստ պայմանագրի |
| 9 | թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ | A4, չկավճած 80 գ/մ2 / 210X297/ մմ, դաս Ա, 500 էջ | 200 | 200 | II եռամսյակ | ապրիլ | 310000 | ըստ պայմանագրի |
| 10 | թղթապանակ, պոլիմերային թաղանթ,Ֆայլ | A4, 70 միկրոն | 2000 | 2000 | II եռամսյակ | ապրիլ | 30000 | ըստ պայմանագրի |
| 11 | թուղթ նշումների, տրցակներով , | գունավոր, կպչուն, տրցակներով 76 x 76մմ, 100 թերթ | 40 | 40 | II եռամսյակ | ապրիլ | 4400 | ըստ պայմանագրի |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | կպչուն | | | | | | | |
| 12 | սոսինձ, Էմուլսիա | սոսինձ ՊՎԱ (էմուլսիա) 120 գր | 10 | 10 | II եռամսյակ | ապրիլ | 1800 | ըստ պայմանագրի |
| 13 | Ամրակ մետաղյա փոքր | 33մմ | 10 | 10 | II եռամսյակ | ապրիլ | 800 | ըստ պայմանագրի |
| 14 | թղթապանակ, կոշտ կազմով | A4, 8 սմ, սև, կապույտ, կանաչ | 40 | 40 | II եռամսյակ | ապրիլ | 22800 | ըստ պայմանագրի |
| 15 | թղթապանակ, կոշտ կազմով | A4, 4 սմ սև, կապույտ, կանաչ | 40 | 40 | II եռամսյակ | ապրիլ | 22800 | ըստ պայմանագրի |
| 16 | Թղթապանակ կոճգամով | թղթապանակ կոճակով, A4 | 40 | 40 | II եռամսյակ | ապրիլ | 3600 | ըստ պայմանագրի |
| 17 | արագակարներ | պլաստիկ, A4 տարբեր գույների | 30 | 30 | II եռամսյակ | ապրիլ | 2700 | ըստ պայմանագրի |
| 18 | կարիչի մետաղալարե կապեր, փոքր | 10մմ/6մմ | 10 | 10 | II եռամսյակ | ապրիլ | 500 | ըստ պայմանագրի |
| 19 | կարիչի մետաղալարե կապեր, միջին | `24մմ/6մմ, 26մմ/6մմ | 10 | 10 | II եռամսյակ | ապրիլ | 700 | ըստ պայմանագրի |
| 20 | ծրար, մեծ, A4 ֆորմատի համար | ծրար՝ A4 /210 x297/ մմ ձևաչափի | 100 | 100 | II եռամսյակ | ապրիլ | 3000 | ըստ պայմանագրի |
| 21 | ծրար, A5ֆորմատի համար | ծրար՝ A5 ինքնասոսնձվող, սպիտակ | 100 | 100 | II եռամսյակ | ապրիլ | 2000 | ըստ պայմանագրի |
| 22 | գրասենյակային գիրք | 70 էջ, տողանի, օֆսեթ թղթից, սպիտակ էջերով | 5 | 5 | II եռամսյակ | ապրիլ | 2100 | ըստ պայմանագրի |
| 23 | ապակարիչներ | N10, N24, N26, և N26.6 | 6 | 6 | II եռամսյակ | ապրիլ | 840 | ըստ պայմանագրի |
| 24 | հաշվիչ սարք | 12 նիշանի, միջին | 3 | 3 | II եռամսյակ | ապրիլ | 4500 | ըստ պայմանագրի |
| 25 | մկրատ գրասենյակային | 13 սմ | 10 | 10 | II եռամսյակ | ապրիլ | 3000 | ըստ պայմանագրի |
| 26 | օրատետր A5 2017 | օրգանայզեր 2017թ-ի , A5 | 10 | 10 | II եռամսյակ | ապրիլ | 10500 | ըստ պայմանագրի |
| 27 | սրիչ | երկաթյա | 10 | 10 | II եռամսյակ | ապրիլ | 2000 | ըստ պայմանագրի |
| 28 | Ֆլեշ 4 GB | ֆլեշ քարտ, 4 GB, USB | 10 | 10 | II եռամսյակ | ապրիլ | 32000 | ըստ պայմանագրի |
| 29 | Կոճգամ պլաստմասե գլխիկներով | գունավոր մեխիկ, պլաստմասսայե գլխիկով | 10 | 10 | II եռամսյակ | ապրիլ | 1700 | ըստ պայմանագրի |
| 30 | ֆլիպչարտի թուղթ | 585*810մմ, 25 թուղթ, սպիտակ | 3 | 3 | II եռամսյակ | ապրիլ | 6000 | ըստ պայմանագրի |
| 31 | ֆլիպչարտի տակդիր | ֆլիպչարտի տակդիր 70*100սմ | 2 | 2 | II եռամսյակ | ապրիլ | 68000 | ըստ պայմանագրի |
| 32 | թղթերի սեղմակ | թղթերի սեղմակ 32 մմ, տուփում 12 հատ | 5 | 5 | II եռամսյակ | ապրիլ | 1450 | ըստ պայմանագրի |
| 33 | թղթերի սեղմակ | թղթերի սեղմակ 25մմ, տուփում 12 հատ | 5 | 5 | II եռամսյակ | ապրիլ | 1200 | ըստ պայմանագրի |
| 34 | կարիչներ, 30-50 թերթի համար | գրասենյակային կարիչ, 30-50 թերթ | 6 | 6 | II եռամսյակ | ապրիլ | 7500 | ըստ պայմանագրի |
| 35 | կավիճներ | կավիճ, սպիտակ, տուփով | 5 | 5 | II եռամսյակ | ապրիլ | 400 | ըստ պայմանագրի |
| | Ընդամենը | ----- | ----- | ------- | ------ | ------- | 565390 | |

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

(ստորագրություն)

ազգանուն

Կ Տ

Ապրանքը ընդունեց

(ստորագրություն)

ազգանուն

Կ Տ

Հավելված N 4.1
_20_03_ 2017թ. կնքված
N <<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/03>> ծածկագրով գնման պայմանագրի

# ԱԿՏ N 1

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և <Սմարթլայն> ՍՊԸ- ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2017թ. մարտի 20-ին կնքված N <<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/03>> գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 2017թ. _ապրիլի _05 _-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| Անվանումը | Քանակական ցուցանիշը (փաստացի) | Չափի միավորը |
| Գնդիկավոր գրիչ | 50 | հատ |
| գելային գրիչ | 40 | հատ |
| մատիտ | 50 | հատ |
| Շտրիխներ | 20 | հատ |
| գծանշիչ (մարկեր) | 20 | հատ |
| Մարկեր գրատախտակի | 20 | հատ |
| Քանոն | 5 | հատ |
| Ռետին | 10 | հատ |
| թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ | 200 | տուփ |
| թղթապանակ, պոլիմերային թաղանթ,Ֆայլ | 2000 | հատ |
| թուղթ նշումների, տրցակներով , կպչուն | 40 | տուփ |
| սոսինձ, էմուլսիա | 10 | հատ |
| Ամրակ մետաղյա փոքր | 10 | տուփ/100 հատ |
| թղթապանակ, կոշտ կազմով | 40 | հատ |
| թղթապանակ, կոշտ կազմով | 40 | հատ |
| Թղթապանակ կոճգամով | 40 | հատ |
| արագակարներ | 30 | հատ |
| կարիչի մետաղալարե կապեր, փոքր | 10 | տուփ |
| կարիչի մետաղալարե կապեր, միջին | 10 | տուփ |
| ծրար, մեծ, A4 ֆորմատի համար | 100 | հատ |
| ծրար, A5ֆորմատի համար | 100 | հատ |
| գրասենյակային գիրք | 5 | հատ |
| ապակարիչներ | 6 | հատ |
| հաշվիչ սարք | 3 | հատ |
| մկրատ գրասենյակային | 10 | հատ |
| օրատետր A5 2017 | 10 | հատ |
| սրիչ | 10 | հատ |
| Ֆլեշ 4 GB | 10 | հատ |
| Կոճգամ պլաստմասե գլխիկներով | 10 | տուփ |
| ֆլիպչարտի թուղթ | 3 | հատ |
| ֆլիպչարտի տակդիր | 2 | հատ |
| թղթերի սեղմակ | 5 | տուփ |
| թղթերի սեղմակ | 5 | տուփ |
| կարիչներ, 30-50 թերթի համար | 6 | հատ |
| կավիճներ | 5 | տուփ |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՍԵՐԸ

Հանձնեց | Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն | ազգանուն, անուն

ստորագրություն | ստորագրություն

01548908
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ
ՀԱՄԱՐ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ
ՀԱՄԱՐ
ДЛЯ ДОКУМЕНТОВ
FOR DOCUMENTS
01505555